

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ հրավերով և Ադրբեջանի հայոց թեմական առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի գլխավորությամբ Մայր Աթոռ այցելեց Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախումբը՝ թվով 25 հոգի: Երգչախումբը, որը կազմվել է 4—5 տարիներ առաջ, առաջնորդ սրբազանի և տ. Գրիգոր ավագ քհն. Անանյանի ջանքերով, գովելի աշխատանք է տանում իր գեղեցիկ և ներդաշնակ երգեցողությամբ՝ ի պայծառություն եկեղեցու և ի մխիթարություն հավատացյալների:

Ապրիլի 5-ին, Աշխարհամատրան կիրակիին, Մայր տաճարը հորդում էր հավատացյալներով: Ս. պատարագին ներկա էին՝ Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը և բազմաթիվ արտասահմանյան ուխտավորներ: Պատարագի երգեցողությունը կատարեց Բաքվի երգչախումբը՝ շնորհալի ղեկավարությամբ Մարկոս Սիմոնյանի: Ս. պատարագ մատուցեց Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավագերեց արժ. տ. Գրիգոր քհն. Անանյանը: «Հայր մեր»-ից առաջ գեղեցիկ ու հոգելիր քարոզ խոսեց տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Որ հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո Քրիստոս» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվեց Վեհարանի հանդիսությանց դահլիճը, ուր և ընդունեց Բաքվի հայոց թեմի առաջնորդին և եկեղեցու երգեցիկ խմբին: Վեհափառ Հայրապետը Իր բարձր գոհունակությունը հայտնեց ս. պատարագի երգեցողության շնորհալի կատարման համար և օրհնեց երգչախմբի անդամների անձնվեր աշխատանքը՝ հայ շարականի և երգի տարածման համար: Հայոց Հայրապետը նորանոր հաջողություններ մաղթեց երգեցիկ խմբի անդամներին և ղեկավարին: Երգչախմբի անդամներն աջահամբույրով ստացան օրհնությունը Վեհափառ Հայրապետի:

Ապրիլի 10—13-ը երգչախումբը եղավ Հայաստանի տարբեր վանքերում և տեսար-

Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգեցիկ խումբը Մայր տաճարում

ժան վայրերում, ծանոթացավ հայ մշակութային կյանքին:

Ապրիլի 11-ի երեկոյան երգչախումբը Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնի դահլիճում ներկա գտնվեց «Անուշ» օպերայի ներկայացմանը: Հյուրերը եղան Էրեբունիում, Գեղարդում, Աշտարակում և Սարդարապատում, ուր ծանոթացան հայ ժողովրդի պատմական անցյալին և դիտեցին աննկուն հավատքի ու հարատևման մեծ կոթողները:

Ապրիլի 14-ի առավոտյան երգչախումբը, հրաժեշտ առնելով Մայր Աթոռից, վերադարձավ Բաքու՝ լավագույն տպավորություններով և հուշերով թե՛ ս. Էջմիածնից և թե՛ քաղաքամայր Երևանից:

Հանուն «Էջմիածին» ամսագրի խմբագրության, շնորհավորում ենք Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախմբին, նրա գեղարվեստական ղեկավարին և մաղթում նորանոր հաջողություններ՝ ի փառս հայ հոգևոր երգի զարգացման: